



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

5374

1879

059  
S - 26

2010

S U R B R A

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՏՈՄԱՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ

աշխատասիրեաց

S . S . U .

ՅԱՀԿԱՐՏԱՅԻՆ ԿՐԵՐԱՆՈՑԻՆ Ս. ՍՈՒԼՊԻԿԱՅԻ

ՎԵՆԵՏԻԿ

## Ի ՏՊՐՈՒԻ ՄԵՐԵԸՆԿԱՆ

1879

059

S-26

Հ. Յ. Յանձնել է Արքայի կողմէ  
Տարբ Հայոց 1892

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ  
ՏՈՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

9421

059

2-26

Printed in Turkey

ՏԱՐԵՐՔ

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՏՈՄԱՐՈԳԻՑՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՏԱՀԱՐԵԱԾ

Տ. Յ. Վ. Պ.

ԹԱՅԱԿԵՐՏԱՅ ԿԴՐԱԽԱՑԻՆ Ս. ՍՈՒԼՊԻԿԵԱՅ



ՎԵՆԵՏԻԿ  
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԻՒԹԱՐԵԱՆ  
1879

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն



1007  
G 39

Որչափ որ այս Եկեղեցական Ծովարապիտութեան տարերբ առելի կղերի կոսաց համար յօրինեցինք, սակայն իւր կարևորութեանը նայելով՝ կը նոշիրենք զայն բորբ աղջիս բահանայից. որովհետեւ այս զիտուրեան միջոցաց կը յուսանեմ որ շատ մեր ծոյն զադափարներ շոկուինք, և զոյց օր մ'աղ Գրիգորեան տոմարը առհասարակ մեր հայ-կարողիկ հասարակութեան մեջ բարոր ընտրենալու իւրին մը զանայ: Նոյն իսկ աշխարհական անձանց ևս օգտակար է ասոր ուսումը. վասն զի վախանակ գերի բլագոյ իրենց ձեռքը ունեցած տոմարին, զայն մահաւանդ ստրուկ կը ենք իրենց, և հասկնարով անոր կը հետեւին ոչ կոյր զկուրայի:

Յուսաղով ուրեմն որ մե յ այս դուզեաքեայ  
աշխատորիւնք համօրէն ազգացնց շահաւան  
կրեայ ըլլալ, փափաքեցակ ՚ի լոյս ընծայել  
զայն: Երանի թէ կարենար ծառայել մատե-  
նիկ ՚ի պայծառորիւն Որբոյ Եկեղեցոյ, ՚ի  
փրկուրիւն հոգոց և ՚ի փառս Աստուծոյ:

Տ Ա Ր Ե Ր Ք

Ե Կ Ե Ղ Ե Ց Ա Կ Ա Ն

Տ Ո Մ Ա Ր Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ն Ա Խ Ա Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Սահման Եկեղեցական Տոմարագիտորհան,  
իւր կարեռորդիւնք և բաժանումը:

Եկեղեցական Տոմարագիտութիւնը, ինչ  
պէս իւր անունէն յայտնի կը տեսնուի,  
տոմարին գիտութիւնը կը սորվեցնէ, որով  
իւրաքանչիւր ոք կրնայ Սուրբ Եկեղեցւոյ  
տօներուն ճիշտ ժամանակը և օրը գտնալ  
առանց պէտք ունենալու օրացուցի կամ  
տօնացուցի գիմելու:

Հատ հարկաւոր է կղերիկոսաց այս գի-  
տութիւնը. որովհետեւ Եկեղեցական մը  
լաւ տեղեակ ըլլալու է ոչ միայն հաւատոյ  
վարդապետութեանց և կրօնական հրա-  
հանգաց՝ շրբնք բանաւային զգուշացին գի-  
տորհան, և օրէն խեղրեսցնե ՚ի բերանոյ  
նոյն (Պաղաք. Բ, 7), այլ նաև պէտք է որ  
նոյն ինքն Եկեղեցւոյ տօնախմբութիւննց

քաջ հմտութիւն ունենայ, որոնց մէջ գըլ-  
խաւորն և հանդիսաւորագոյնն է Զատիկկը.  
քահանայքն զետացիք... Կ'ըսէ Աստուած,  
պահեցեն զպահպահորիւն իմ (Եղեկ. ԹԴ,  
15, 16): Ուստի նաև Եւրոպիոյ համալսա-  
րանաց և կղերանոցաց մէջ այս գիտու-  
թիւնը մասնաւոր ճիւղ մը կը կազմէ. ո-  
րով իւր կարեռութիւնը յայտ յանդիման  
կ'երենայ:

Տոմարագիտութեան վրայօք մեր բոլոր  
զրուցելիքը երկու գլխոյ մէջ կը պարու-  
նակուի. առաջնը Զատկական տօնին ո-  
րոշմանը վրայ կը ճառէ, իսկ երկրորդը  
Յուլիսեան տոմարին նորոգութեանը վր-  
րայ: Յետոյ նաև քանի մը Յաւելուածոց  
մէջ այլ և այլ իրաց մասնամասն բացա-  
սրութիւնը պիտոր զնենք՝ ի գիւրութիւն  
ընթերցողաց:

ԳԼՈՒԽ Ա.

ԶԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Անշարժ և շարժական տօնք Եկեղեցոյ. Զատ-  
կի տօնախմբութեան օրը լատ Մոլիսա-  
կան օրինաց և լատ վճռոյ Ա. Ժաղովոյն  
Նիկիոյ. հանգամանք Զատկական տօնի:

Սուրբ Եկեղեցոյ տօնախմբութիւնները  
երկուքի կը բաժնաւին, այսինքն անշարժ և  
շարժական տօներու: Առաջններուն թիւէն  
են Քրիստոսի Ծնունդը, Տնօրէնաւ թիւնն և  
Յայտնութիւնը, Տեառնընդառաջը, Արբոյ  
կուսին Աւետումը՝ Ծնունդը՝ Ընծայումը՝  
Անարտատ Յղութիւնը և այլն. որոնք ամէն  
տարի մի և նոյն տարոց թուականներուն  
կը հանդիպին: Իսկ շարժականներուն ա-  
մէնքն ալ Զատկին հետ կապուած ըլլա-  
լով, և Զատկի տօնն ալ միշտ նոյն կիրակի  
օրուան չիցնալով, անոր համար անդադար  
փոփոխութեան ենթակայ են. այսպէս են  
Բուն Բարեկենդանը, Դաղկազարդը, Նոր  
կիրակին, Համբարձումը, Հոգեգալուսարը,

4\*

ամենասուրբ Երրորդութեան տօնը և այլն<sup>1</sup>.  
Հետեւաբար ճշգրիտ գաղափար մը ունե-  
նալու է թէ Երբ ըստ կանոնաց Եկեղեցւոյ  
պէտք է կատարել Զատկական մեծահան-  
դէս տօնախմբութիւնը:

Հրեայր ըստ աստուածային օրինադրու-  
թեան կը տօնէին և կը տօնեն մինչեւ ցայսօր  
Զատիկը կամ Պատերը դարնանային զիշե-  
րահաւասարէն ետքը եկող լրւսնոյ լրման օ-  
րը, որն որիբենց սրբազն տարւոյն առաջին  
ամսոյն այսինքն Նվանին չորեքտասաննե-  
րորդ օրն է<sup>2</sup>. յառաջնորդ ամսնանեն, կ'ըսէ  
Աստուած, 'ի տասն և 'ի յորս ամսոյն 'ի մէջ  
երեկորեացն Զատիկ Տեսակ (Պետակ. 14, 5).  
դարձեալ կը խօսի Աստուած Մովսեսի,  
ասս և արացնեն որդիին խրայելի զԶատիկն  
'ի ժամանակի իշրում. 'ի յորեքտասաներոր-  
դում առոր ամսոյն առաջնոյ, արացնեն զայն  
ընդ երեկ (Թիւք. թ. 2. 5), ուրիշ տեղ  
մ'ալ կը կարգանք յամսնանեն առաջնորմ, 'ի  
յորեքտասաներորդում առոր ամսնանեն Զա-  
տիկ Տեսակ (Անգ. 15. 16): Ուստի նաև  
Փոքր Ասիոյ Եկեղեցիք Հրէից հետեւլով  
Քրիստոսի թուականին երկրորդ Դարուն  
մէջ Զատիկը մարտի լրւսնին լրման կամ  
չորեքտասաններորդ օրը կը տօնէին. անոր  
Համար Զորեքտասանելորդնայր ըսուեցան:  
Այս Հերձուածողաց մոլորութիւնը քննե-

լով Նիկիոյ Ա. տիեզերական սիւնէոդոսը՝  
դատապարտեց զայն յամին 325, և միան-  
գամայն որոշեց որ Զատկական տօնը պի-  
տոր խմբուէր բոլոր քրիստոնեայ ազգաց  
մէջ ըստ անյօդգողք սովորութեան Հռով-  
մէական Եկեղեցւոյ գարնանային գիշերա-  
հաւասարէն ետքը եկող լրւսնոյ լրման  
յաջորդ կիրակի օրը<sup>1</sup>: Դարձեալ Նիկիոյ  
Ա. Հարբ որոշեցին որ գարնանային գիշե-  
րահաւասարը պիտոր սկսէր մարտի 20ին  
կէս գիշերուն, որ է ըսել մարտի 21երորդ  
օրուան սկիզբը: Այս ըսածներնէս յայտնի  
կը տեսնուի որ Զատիկը գտնալու համար  
երեք աստեղաբաշխական թուականաց  
պէտք է դիմել, որք են. առաջին՝ արևա-  
դարձական կամ արեգակնային տարին, քա-  
ղաքացին տարին ուղղեցու և գարնանային  
գիշերահաւասարը ճիշտ ժամանակին սկը-  
սելու համար. Երկրորդ՝ յուսնոյ գորգերա-  
ցական շրջանը կամ յուսնական ամիսը, ու-  
րում կը գիտուի մարտի ամսոյն լրւսնին  
լրումը. Երրորդ՝ շաբաթը կամ եօրենեակը,  
որուն միջնցաւը կիրակի օրը գիւրաւ կը  
գտնուի:

1. Դիրաղդաբար Նիկիոյ ժողովըն այս լքնուը կոր-  
սուած ըլլալով մինչև մեր ատենը հասած չէ. սակայն  
գիտենք 'ի պատմութենէ այսպիսի կանոնադրութեան մը  
սահմանուած ըլլալ:

<sup>1</sup> Տես Յաւելուած Ա. Յուցակ անլորժ և լորժական ու-  
նից ըստ հին և նոր քումբոց:

<sup>2</sup> Տես Յաւել. Բ. Հրեեւ որբազն ուորույն ամանեւը:

## ՅՈՒՌԻԱՆ Ա.

ՆԻԿԻՈՑ ՍԻՒՆՀՈԴՈՍԻՆ ՈՐՈՇՈՂԻԹԻՒՆԸ ԱՐԵԳԱԿ-  
ՆԱՑԻՆ ՏԱՐԻՈՑՆ ՎՐԱՅ

Յուղիս կեսարին ձեռօր եղած տոմարին նո-  
րոգործիւնը. Նիկիոյ ժողովը զայն կ'ընդ-  
ունել:

Արեգակնային տարւոյն նկատմամբ՝ Նի-  
կիոյ սուրբ Ֆողովը՝ Յուլիոս կեսարին նո-  
րոգմանը հետևեցաւ. Այս երեսին հռով-  
մայեցի Դիկտատորը Քրիստոսէ 47 տարի  
առաջ Եզիստոսի Ազեքսանդրիայէն Սո-  
սփենէս անուամբ անուանի աստղաբաշխը  
ի Հռովմ կանչելով անոր ձեռօքը տոմարը  
կարգադրել տուած էր. այս կարգադրու-  
թիւնը Յուղիոսնան կամ Յուղիան նորոգունե  
անուանուեցաւ. Ինչպէս իւրաքանչիւր ոք  
գիտէ՝ արեգակնային տարւոյն շրջանը 365  
օր և 6 ժամէն քանի մը վայրկեան պակաս  
կը տեէ. և որովհետեւ Յուլիոս կեսարէն  
առաջ տոմրին միայն 365 օրէ կը բաղկա-  
նար, անոր համար շորս տարուան միջոցին  
մէջ քաղաքային տարին արեգակնայինէն  
օր մը եւտ կը մնար. Այսպիսի անպատե-

Հութեան դարման տարաւ Յուլիոս վճռե-  
լով որ՝ յորս տարին մէյմբ փետրուար ա-  
միսը օր մը աւելի ունենայ, այսինքն փո-  
խանակ 28ի ունենայ 29 օր. որով տարին  
ալ 366 օրէ պիտոր բաղկանայ. այն տար-  
ւան նահանց անունը կու տանք մենք. Աա-  
կայն դարձեալ ըստ աստեղաբաշխական  
հաջութ՝ արեգակնային շրջանը ճիշդ 365 օր  
և 6 ժամ ըբլարով չորս տարուան մէջ այն  
վեց ժամերը վրայէ վրայ գալով՝ օր մը  
ամբողջ չէին կրնար կազմել. Այս բանս  
որչափ որ ալ իմացաւ Սոսփենէս, սա-  
կայն թողարց որ իւր յաջորդները շակեն  
զայն. Հոսված Քահանայապետի մը պի-  
տոր իյնար այս գլխաւոր կէտը կարգա-  
դրելու պատիւը, ինչպէս յետոյ պիտոր  
տևսնանք:

ՅՈՒՌԻԱԾ Բ

ՆԻԿԻՈՑ ԺՈՂՈՎՐՁՆ ԼՈՒԽՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՆ ՆԿԱՏ-  
ՄԱՄԲ ԸՐԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ

Շրջան ՄԵԽԱՆԻՇԻ ԱՆՀԱՂԻՐ և ԱՆՀԱՂԻՐ . ԱՆՀԱՂԻՐ  
ՄԵԽԱՆԻՇԱՆ ՀՐԴԱՆԻՇԻՆ :

Լուսնական ամսոյն գալով սուրբ Ժո-  
ղովը վճռեց որ Մետոնեան լուսնոյ շրջանը  
պիտօր զսրծածուէր, Մետոն Աթենացի  
աստղաբաշխ մըն էր Քրիստոսէ 455 տարի  
առաջ. իւր ազգին մէջ տարին երկոտա-  
սան լուսնական ամիսներէ կը բաղկանար.  
ուսկից կը հետեւէր որ գարնանային դիմե-  
րակաւասարը ամեն տարի 11 օր ետ կը  
մնար. որովհետեւ լուսնոյ ամսական շրջա-  
նը կատարուելով 29 օրուան և 12 ժա-  
մուան մէջ (բուն՝ 29 օրուան, 12 ժամուան,  
44 վայրկենի և 5 մանրերկրորդի մէջ),  
տասուերկու լուսնական ամիս կ'ընէ 354  
օր (բուն՝ 354 օր, 8 ժամ, 48 վայրկեան և  
36 մանրերկրորդ), այսինքն արեգակնային  
տարիէն 11 օրուան չափ պակաս (ճշշտ՝ 10  
օր, 21 ժամ, 0 վայրկեան և 44 մանրեր-  
կրորդ). արդ երեք տարուան մէջ այն 11

օրը վրայէ վրայ գալով 55 օր կ'ընեն. ուս-  
տի և Յոյնք ամեն երրորդ տարուան վերջը  
Աւելաց ամիս մը կը գնէին, որն որ 50 օր  
ունէր. բայց գարձեալ երեք տարուան մի-  
ջոցին մէջ երեք օր կը մնար, և որոնք 50  
տարուան մէջ 50 օր կը կաղմէին. հետեւա-  
բար իւրաքանչիւր 50երորդ տարին Աւե-  
լաց ամսէն զատ չորեքտասաներորդ ամիս  
մ'ալ աւելցնել հարկ կ'ըլլար 'ի վախճան  
տարւոյն: Այս ամեն խառնաշխոթ հաշիւ-  
ները պարզեց Մետոն՝ երբ ովհմբիական  
խազերուն մէջ իւր հաշակաւոր գիւտը 'ի  
լոյս ընծայեց. բատ իրեն այն երեքտասա-  
ներորդ կամ Աւելաց ամիսը իւր հնարած  
իննետասնամենոյ լուսնական շրջանին մի  
միայն երրորդ՝ վեցերորդ՝ իններորդ՝ մե-  
տասաններորդ՝ չորեքտասաներորդ և իննե-  
տասներորդ ամսոց վերջը գրուելու է,  
որպէս զի քսաններորդ տարին այսինքն Մե-  
տոնեան շրջանին առաջին տարին լուսնա-  
կան ամիսը քաղաքային տարւոյն հետ հա-  
մաձայն ըլլայ. որովհետեւ 49 քաղաքային  
տարի հաւասար է 235 լուսնական ամսոց,  
այսպէս

ամք 19×12 լուսնական ամսով = 228  
լուսնական ամսոց:

Բայց ամեն տարի ունի ևս  
օր 11, որք 19 տարուան մէջ = 209 օր, և  
որոնք լուսնական ամսոյ վրայ բաժա-  
նեալ:

$209 : 50 = \frac{29}{30}$ . ուստի հետեւաբար

228 լուսնոյ ամիս + 6 ամիս, + 29օր (կամ  
մէկ լուսնական ամիս) = 255 լուսնի  
ամսոց:

Յոյնք այնպէս ուրախացան այս նորա-  
հնար զիւտին վրայ որ՝ որոշեցին իւրաքան-  
չիր տարեգիլին հրապարակաւ Աթենա-  
սայ տաճարին վրայ ոսկեղէն տառերով՝  
դրոշմել տալու Մետոնիան շրջանին տա-  
րին, և արծաթէ տախտակի մը վրայ նաև  
ոսկի գրերով նշանակել տառով զայն չը-  
ռովմ ճամբեցին. այս է որ ոսկեղիր ոսկե-  
րի կամ իննոտասներևակ կը կոչուի, և  
կը ցուցընէ թէ աստ և այժմ լուսոյ 49  
տարուան շրջանին որ տարւոյն մէջ կը  
գտնուինք:

Արդ ՚ի սկզբան առաջին ամի Մետո-  
նեան շրջանին, լուսնական ամսուն սկսիլը  
քաղաքային տարւոյն սկզբան կամ յու-  
նուարի 1ին հետ բոլորովին համաձայն կը  
գտնուի. բայց ՚ի դժուի երկրորդ տարւոյն՝  
որովհետեւ լուսինը արդէն 11 օրէ ՚ի վեր  
ճնած է, լուսնական տարին արեգակնայի-  
նէն 11 օր նուազ ըլլալուն համար՝ հետեւա-  
րար լուսինը մետասան օրուան պիտոր ըլ-  
լայ. նմանապէս երրորդ տարւոյն յունուա-  
րի 1ին 22 օրուան պիտոր ըլլայ, և չորրորդ  
տարուան սկզբը՝ 55 օրուան. այն ժամա-  
նակը 50 ջնջելով ինչու որ 50 օր լուսնա-  
կան ամիս մը կ'ընէ՝ մնացորդը պահելու է  
և գործողութիւնն ալ առաջ տանելու է:  
Այս ամեն տարիներուն վրայ գրուած թիւր

վերադիր կը ըստուի, որով կը հասկընանք  
այս ինչ տարւոյն յունուարի 1ին լուսինը  
քանի օր ունենալը:

Ստողաբաշխիք Մետոնեան շրջանին ըս-  
կիզբը Քրիստոսի թուականէն և տարի ա-  
ռաջ դրած են, որովհետեւ այն տարին յու-  
նուարի 1ին նոր լուսին ծնած էր: Ուստի  
տարւոյ մը թուականին վրայ և աւելցնե-  
լով և յետոյ 19ի վրայ բաժնելով դիւրաւ  
ոսկեղիրը կը գտնուի. բաժանման քանե-  
րորդը լուսոյ շրջանին քանի անդամ կա-  
տարուած ըլլալը կը ցուցընէ, և մնացորդը  
նոյն ինքն նոր շրջանին տարին կամ ոսկե-  
դիրը կը յայտնէ. եթէ 0 ևլայ մնացորդը  
այն ատեն ըսել է որ լուսոյ շրջանին  
19երրորդ տարւոյն մէջն ենք:

Իսկ վերադիրը գտնալու համար ոսկեղի-  
րէն և պակսեցնելու և մնացած և 1ով  
բազմապատկելու է. յետոյ արտադրեալէն  
հանելու է ո՞րչափ 30 օր իր մէջը կը պա-  
րունակուի, և մնացորդը վերադիրն է, որն  
որ միշտ այրութենի տառերով կը գրուի:

Ըստնիս օրինակով մը բացարենք:  
Կ'ուզենք զիտնալ թէ 1879 տարւոյս ոսկե-  
դիրը որն է. ասոր համար և աւելցնենք  
սոյն տարւան թուականին վրայ և կ'ըլլայ  
1880. հիմայ 19ի վրայ բաժնենք 1880ը և  
կը տևսնանք որ քաներորդն է 98, իսկ մը-  
նացորդը 18. որ է ըսել թէ մինչեւ ցաման  
1879 Մետոնեան լուսոյ շրջանը 98 ան-  
դամ լրացեր է, և այժմ 99երրորդ շրջանին



ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

18Կրորդ տարւան մէջն ենք. ուստի այն  
տարւան ոսկեգիրն է 18. Այս վերջին  
թուոյն ձեռօքը կրնանք զիւրաւ գտնալ վե-  
րապիրը յաջորդ կերպով.  $18 - 1 = 17 \times 11$   
 $= 187 - 50 = 137 - 50 = 127 - 50 = 97 - 50$   
 $= 67 - 50 = 57 - 50 = 7$ . ուրեմն 1879 տար-  
ւան վերադիրն է (1.) է. Աւելի յստակու-  
թեան համար հոս կը գնենք Մետոնեան  
լուսնոյ շրջանին տախտակը, ուր ոսկեգիրը  
և վերապիրը իրենց կարգը պահած են:

| ԱՐԵՎԵՆ |                     | ԱՐԵՎԵՆ | ԱՐԵՎԵՆ  |
|--------|---------------------|--------|---|
| 1      | $(h\partial)_x = 0$ | 1      | $\frac{d}{dt} \cdot \frac{d}{dx} \cdot \frac{d}{dt} \cdot \frac{d}{dx}$ |
| 2      | $h_x$               | 2      | $\frac{d}{dt} \cdot \frac{d}{dx}$                                       |
| 3      | $h_p$               | 3      | $\frac{d}{dt}$  |
| 4      | $(L)^q$             | 4      | $\frac{d}{dx}$  |
| 5      | $d_q$               | 5      | $\frac{d}{dt}$  |
| 6      | $d_p$               | 6      | $\frac{d}{dx}$  |
| 7      | $(L)_q$             | 7      | $\frac{d}{dt}$  |
| 8      | $d_t$               | 8      | $\frac{d}{dt}$  |
| 9      | $h_t$               | 9      | $\frac{d}{dt}$  |
| 10     | $(L)\partial$       | 10     | $\frac{d}{dx}$  |
| 11     | $t$                 | 11     | $\frac{d}{dt}$  |
| 12     | $(L)^\omega$        | 12     | $\frac{d}{dt}$  |
| 13     | $d_\mu$             | 13     | $\frac{d}{dt}$  |
| 14     | $h_q$               | 14     | $\frac{d}{dx}$  |
| 15     | $(L)_q$             | 15     | $\frac{d}{dt}$  |
| 16     | $d_L$               | 16     | $\frac{d}{dt}$  |
| 17     | $h_L$               | 17     | $\frac{d}{dt}$  |
| 18     | $(L)\zeta$          | 18     | $\frac{d}{dt}$  |
| 19     | $d_L$               |        |   |

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԳՏՆԱԼՈՒ ԵՒ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԵՐՊ

Կիրակացիք. շըստ արեգակնային. կիրակացին տառերուն համաձայնորդիւնը տարեցիսց հետ բառ Մշտիւնաւոր Տումարին:

Յարաթը որոցելու և կիրակի օրը գըտ-  
նալու համար կիրակազիրը դրուած է. ա-  
սիկայ այբուբենի տուածին եօթն դրերէն կը  
բաղկանայ՝ որք են Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Խ,  
որոնք կը ցուցընեն թէ այս ինչ տարբուան  
մէջ կիրակի օրերը ամսոց ո՞ր թուականե-  
րուն կը համապատասխանեն. Հասարակ  
տարիները մէկ կիրակազիր մը միայն ու-  
նին. իսկ նահանջ տարիները երկու հատ,  
որոնց առաջնը մինչև ցվերջ փետրուարի  
կը գործածուի, և միւսը մարտի սկիզբէն  
մինչև ցման գեկտեմբերի:

Աստղաբաշխիք արևուն 28 տարւան են-  
թագրեալ շրջանին վրայ յարմարցուցած են  
կիրակագիրները, այնպէս որ ամեն 28 տա-  
րի նոյները գարձեալ կուգան։ Կիրակա-  
գիրները մեծէն փոքր առաջ կ'երթան՝ վե-  
րէն սկսելով։ Տես հետեւեալ արեգակնա-  
յին շրջանին աղիւսակը.

| ԱՌԴ<br>ԱՐԵՎԻՆ-<br>ՀԱՅՈՒՆ | ԱՌԴ<br>ԱՐԵՎԻՆ-<br>ՀԱՅՈՒՆ | ԱՌԴ<br>ԱՐԵՎԻՆ-<br>ՀԱՅՈՒՆ | ԱՌԴ<br>ԱՐԵՎԻՆ-<br>ՀԱՅՈՒՆ |
|--------------------------|--------------------------|--------------------------|--------------------------|
| 1 9 ն. Ք. • ՔԲՐԻՍՏՈՆԻ    | 1868                     | b2 (Բ1)                  |                          |
| 2 8 "                    | 1869                     | b (Իլ)                   |                          |
| 3 7 "                    | 1870                     | q (Ել)                   |                          |
| 4 6 "                    | 1871                     | q. (Ո-ր)                 |                          |
| 5 5 "                    | 1872                     | ԲԱ. (ԵԲ)                 |                          |
| 6 4 "                    | 1875                     | b (Բ1)                   |                          |
| 7 3 "                    | 1874                     | 2 (Գ1)                   |                          |
| 8 2 "                    | 1875                     | b (Իլ)                   |                          |
| 9 1 "                    | 1876                     | q-q. (Ել)                |                          |
| 10 1 ԺԵՄ ՔԲՐԻՍՏՈՆԻ       | 1877                     | b (ԵԲ)                   |                          |
| 11 2 "                   | 1878                     | Ա. (Ակ)                  |                          |
| 12 5 "                   | 1879                     | b (Բ1)                   |                          |
| 13 4 "                   | 1880                     | 2b (Գ1)                  |                          |
| 14 5 "                   | 1881                     | q (Ել)                   |                          |
| 15 6 "                   | 1882                     | q. (Ո-ր)                 |                          |
| 16 7 "                   | 1885                     | b (ԵԲ)                   |                          |
| 17 8 "                   | 1884                     | Ա. (Ակ)                  |                          |
| 18 9 "                   | 1885                     | 2 (Գ1)                   |                          |
| 19 10 "                  | 1886                     | b (Դ1)                   |                          |
| 20 11 "                  | 1887                     | q (Ել)                   |                          |
| 21 12 "                  | 1888                     | q.Բ (Ո-ր)                |                          |
| 22 13 "                  | 1889                     | Ա. (Ակ)                  |                          |
| 23 14 "                  | 1890                     | b (Բ1)                   |                          |
| 24 15 "                  | 1891                     | 2 (Գ1)                   |                          |
| 25 16 "                  | 1892                     | b. Պ (Ել)                |                          |
| 26 17 "                  | 1893                     | q. (Ո-ր)                 |                          |
| 27 18 "                  | 1894                     | b (ԵԲ)                   |                          |
| 28 19 "                  | 1895                     | Ա. (Ակ)                  |                          |

Ինչպէս յայտնի կ'երևնայ նախընթաց  
տախտակին մէջ արեգակնային շրջանին  
4, 5, 9, 15, 17, 21 և 25երրորդ տարիները  
նահանջը ըլլալով, կիրակագիրնին ալ կրկն

| Եպահեծ                            | Եպահեծ                            | Եպահեծ                            |
|-----------------------------------|-----------------------------------|-----------------------------------|
| Հայոց Նոր Պատմութեան<br>1583—1699 | Հայոց Նոր Պատմութեան<br>1700—1799 | Հայոց Նոր Պատմութեան<br>1800—1899 |
| Գ.Բ. (ՈՒ-Ր)                       | Գ.Գ. (ԵԼ)                         | Ե.Դ. (Դ.Լ.)                       |
| Ա. (ԿՒ-Ր)                         | Բ. (ՇԲ)                           | Գ. (ՈՒ-Ր)                         |
| Ե. (Բ.Լ.)                         | Ա. (ԿՒ-Ր)                         | Բ. (ՇԲ)                           |
| Զ. (Գ.Լ.)                         | Ե. (Բ.Լ.)                         | Ա. (ԿՒ-Ր)                         |
| Ե.Դ. (Դ.Լ.)                       | Զ.Ե. (Գ.Լ.)                       | Ե.Զ. (Բ.Լ.)                       |
| Գ. (ՈՒ-Ր)                         | Գ. (ԵԼ)                           | Ե. (Դ.Լ.)                         |
| Բ. (ՇԲ)                           | Գ. (ՈՒ-Ր)                         | Գ. (ԵԼ)                           |
| Ա. (ԿՒ-Ր)                         | Բ. (ՇԲ)                           | Գ. (ՈՒ-Ր)                         |
| Ե.Զ. (Բ.Լ.)                       | Ա.Ե. (ԿՒ-Ր)                       | Բ.Ա. (ՇԲ)                         |
| Ե. (Բ.Լ.)                         | Զ. (Գ.Լ.)                         | Ե. (Բ.Լ.)                         |
| Դ. (ԵԼ)                           | Ե. (ԵԼ)                           | Զ. (Գ.Լ.)                         |
| Գ. (ՈՒ-Ր)                         | Գ. (ԵԼ)                           | Ե. (ԵԼ)                           |
| ԲԱ. (ՇԲ)                          | Գ.Բ. (ՈՒ-Ր)                       | Գ.Գ. (ԵԼ)                         |
| Ե. (Բ.Լ.)                         | Ա. (ԿՒ-Ր)                         | Բ. (ՇԲ)                           |
| Զ. (Գ.Լ.)                         | Ե. (Բ.Լ.)                         | Ա. (ԿՒ-Ր)                         |
| Ե. (Գ.Լ.)                         | Զ. (Գ.Լ.)                         | Ե. (Բ.Լ.)                         |
| Գ.Գ. (ԵԼ)                         | Ե.Դ. (Դ.Լ.)                       | Զ.Ե. (Գ.Լ.)                       |
| Բ. (ՇԲ)                           | Գ. (ՈՒ-Ր)                         | Գ. (ԵԼ)                           |
| Ա. (ԿՒ-Ր)                         | Բ. (ՇԲ)                           | Գ. (ՈՒ-Ր)                         |
| Ե. (Բ.Լ.)                         | Ա. (ԿՒ-Ր)                         | Բ. (ՇԲ)                           |
| Զ.Ե. (Գ.Լ.)                       | Ե.Զ. (Բ.Լ.)                       | Ա.Ե. (ԿՒ-Ր)                       |
| Ե. (Բ.Լ.)                         | Զ. (Գ.Լ.)                         | Ե. (Բ.Լ.)                         |
| Դ. (ԵԼ)                           | Ե. (ԵԼ)                           | Զ. (Գ.Լ.)                         |
| Ա.Ե. (ԿՒ-Ր)                       | Բ. (Բ.Լ.)                         | Գ.Բ. (ՈՒ-Ր)                       |
| Զ. (Գ.Լ.)                         | Ե. (Բ.Լ.)                         | Ա. (ԿՒ-Ր)                         |
| Ե. (Բ.Լ.)                         | Զ. (Գ.Լ.)                         | Ե. (Բ.Լ.)                         |
| Դ. (ԵԼ)                           | Ե. (ԵԼ)                           | Զ. (Գ.Լ.)                         |

է. մինչդեռ միւս տարբիններն հասարակ են և մէկ կիրակագիր միայն ունին։ Գրիգոր Ֆ. Քաջանացավետին նորոգմանէն ետքը՝ կիրակագիրներուն նկատմամբ ևս մեծ զա-

նազանութիւն մը մտաւ հին և նոր տոմարներուն մէջ. Յուլիոսեան տոմարին կիրակագիրք անփոխի մնացին, իսկ Գրիգորեան տոմարինները ամէն հարիւր տարի փոխուելու հարկաւորութիւն եղաւ:

Եթէ ուզենանք գիտնալ թէ այս ինչ տարին արեգակնային շրջանին ո՞ր տարւոյն կը համապատասխանէ, ալէտք է տարուան թուականին վրայ 9 աւելցրնել (որովհետեւ ըստ աստղաբաշխից այս շրջանը Քրիստոսէ 9 տարի առաջ կը սկսի), և ետքը 28ի վրայ բաժնել ամբողջը. բաժնման քաներորդը արեգակնային շրջանին քանի անգամ կատարուած ըլլալը կը ցուցնէ, իսկ մնացորդը նոր շրջանին տարին կը յայտնէ. Պոր օրինակ 1879+9=1888, դոր 28ի վրայ բաժնելով՝ քաներորդն է 67 և մնացորդը 12. ուստի ըսկել է որ՝ 1879 տարւան մէջ 67 անգամ արեգակնային շրջանը լրացեր, և այժմ 68երորդ նոր շրջանին 12 տարւոյն մէջն ենք. Եթէ մնացորդը 0 ելայ՝ այն ատեն յայտնի է որ արեւուն շրջանին 28երորդ տարւոյն մէջը կը գլունուինք. Արդ, արեգակնային շրջանին տարին գտնալէն ետե՛ ամենագիւրին բան է կիրակագիրը գտնալը. մինչև ցամեն 1582 փաղառութեամբ՝ արեգակնային շրջանին առաջին տարւոյն կիրակագիրն էր եց, երկրորդինը ն, և այն. իսկ 1583էն մինչև մեր օրերը և մեզմէ վերջն ալ հին և նոր տոմարներուն մէջ կիրակագիրները

մէկմէկէ տարրեր ըլլալու սկսան. մինչդեռ Յուլիոսեան տոմարը առաջուան սըխալ կարգը կը շարունակէ, Գրիգորեանը իւրաքանչիւր հարիւրամեայ կամ երկհարիւրամեայ միջոցին մէջ կիրակագիրները կը փոխէ: Ի հաստատութիւն այս ամէն ըսածներնուում թուղ ընթերցողը աչք մը նետէ վերը դրուած աղլիսակին վրայ:

Հիմայ ենթաղրենք որ կիրակագիրը գըտանք. բայց ասոր միջոցուը ինչպէս կարելի է գիտնալ տարւոյն ինչ օրուն սկսիլը:

Նախ և առաջ գիտնալու է որ Մշտնջենաւոր Տոմարին ամէն տարիները Առվ կը սկսին, թէ հասարակ ըլլան և թէ նահանջնակացանը սակայն իւրաքանչիւր տարւոյ կիրակագիրը տարրեր է. ուստի երբ տարւոյ մը կիրակագիրը

Ա. ըլլայ՝ տարին հասարակ է,  
և տարեգլուխն ալ կիրակի.

Ա. ըլլայ՝ տարին նահանջ է,  
և տարեգլուխն ալ կիրակի.

Բ. ըլլայ՝ տարին հասարակ է,  
և տարեգլուխն ալ շաբաթ.

ԲԱ. ըլլայ՝ տարին նահանջ է,  
և տարեգլուխն ալ շաբաթ.

Գ. ըլլայ՝ տարին հասարակ է,  
և տարեգլուխն ալ ուրբաթ.

ԳԲ. ըլլայ՝ տարին նահանջ է,  
և տարեգլուխն ալ ուրբաթ.

Դ. ըլլայ՝ տարին հասարակ է,  
և տարեգլուխն ալ ուրբաթ.

ԴԳ. ըլլայ՝ տարին հասարակ է,  
և տարեգլուխն ալ հինգշաբթի.

ԴԳ. ըլլայ՝ տարին նահանջ է,  
և տարեգլուխն ալ հինգշաբթի.

Ե ըլլայ՝ տարին հասարակ է,  
և տարեգլուխն ալ չորեքշաբթի.  
Ե՞՞ ըլլայ՝ տարին նահանջ է,  
և տարեգլուխն ալ չորեքշաբթի.  
Զ ըլլայ՝ տարին հասարակ է,  
և տարեգլուխն ալ երեքշաբթի.  
ԳԵ ըլլայ՝ տարին նահանջ է,  
և տարեգլուխն ալ երեքշաբթի.  
Ե ըլլայ՝ տարին հասարակ է,  
և տարեգլուխն ալ երկուշաբթի.  
Ե՞՞ ըլլայ՝ տարին նահանջ է,  
և տարեգլուխն ալ երկուշաբթի.

Դարձեալ Աշտնջենաւոր Տոմարին օգ-  
նութեամբը կրնանք զիւրաւ զիտնալ թէ  
այս ինչ տարուան մէջ անշարժ տօները որ  
օրուան եկան կամ սիտոր գան :

### ՅՈՒՌԻԱԾ Դ

ԶԱՏԻԿ ԳՅՆՍԼՈՒ ԵՂՋԱԿ

Որոշել նահանջ կամ հասարակ տարին և կի-  
րակագիրը գտնալով ուկեցիրը և վերայիրը ։  
օրինակ ։ երբ ամենեն մօս և երբ ամենեն  
հեռոց Զատիկ կրնայ հանդիպիլ ։

Գանք հիմայ Զատոկական տօնախմբու-  
թիւնը գտնալու կերպին ։ ասոր համար  
պէտք է նախ զիտնալ՝ որ այս ինչ տարին  
նահանջ է թէ ոչ, և ինչ կիրակագիր ու-  
նի ։ Ուստի տարւոյն թուականին վրայ 9  
աւելցնելով 28ի վրայ բաժնենք ։ մնացորդը  
պիտոր ցուցընէ մեղի թէ արեգակնային  
շրջանին որ տարւոյն մէջն ենք, որով կը  
հասկնանք տարւոյն նահանջ կամ հասա-  
րակ ըլլալը<sup>1</sup> ։ յետոյ վերը գրուած արե-

1 Ուրիշ միջոցով մ'ալ կը գտնուի այս ինչ տարուան  
նահանջ կամ հասարակ ըլլալը, այսինքն տարւոյ թուա-  
կանին վերըն երկու թիւերը կի գրայ բաժնելով երբ որ  
բաժանումը ամբողջ և կատարեալ ըլլայ՝ այն տան տա-  
րին նահանջ է, ինչպէս 1812, 1860 և 1880 տարիները .  
ասպ թէ ոչ՝ հասարակ են, ինչպէս 1817, 1859 և 1879  
տարիները ։ Այս միայն զիտնալու է որ այն դարագլուխ-

գակնային շրջանին աղիւսակին մէջ փընտոենք թէ այն տարուան կիրակագիրը ըստ նոր տօմարին ո՞րն է. որով տարեգլխին Բնչ օրով սկսիլը դիւրաւ կ'իմանանք: իսկ ուկեգիրը դանալու համար՝ տարւոյն թուաւ կանին վրայ և աւելցնենք և 19ի վրայ բաժնենք. մնացորդը ուկեգիրն է. ասոր միջոցաւը վնասուենք վերագիրը Արտօննեան լուսնոյ շրջանին տախտակին մէջ. վերագիրը որն որ յունուարի 1ին զեկտեմբերի լուսնոյն քանի օրուան ըլլալը կը ցուցնէ՝ մեզի ամառոր ծառայէ մարտի 21էն ետքը եկող լուսնին լրումը գտնալու, որուն յաջորդ կիրակին Զատիկի է ըստ Նիկիոյ ժողովոյն վճռոյն: Բայց որովհետեւ լուսնական ամիսը 29 օր և 12 ալ ժամ ունի հաշուոյ պարզութեան համար աստղաբաշխը սովոր են յունուարէն սկսելով լուսնին մէյմը 30 և մէյմը 29 օր տեղողութիւն տալ, որն որ վերջապէս նոյն բանին կու գոյ: Ուստի զեկտեմբերի լուսնինը 29 օր ունենալով պէտք է վերագրին վրայ աւելցնել քանի օր որ պէտք է զեկտեմբերի լուսնի վերջը գտնալու համար. ետքը հետզետէ փնտոելու ենք յունուար՝ վետրուար և մարտ ամսոց լուսնիները. իսկ մարտի լուսնին ծնունդը գտնալուս պէս՝ 13 օր վրան

Ները միայն նահանջ կը սեպուին ըստ նոր տօմարի, որոնց առաջին երկու թիւերը չորսի վրայ կատարեալ կերպով կը բաժնուին. ուստի հասարակ են 1700, 1800 և 1900 տարիները և նահանջ 1600 և 2000 տարիները:

Դնելով իւր լրմանը կը հասնինք, որ չորեքտասաներորդ օրը տեղի կ'ունենայ: Բայց թէ որ մարտի լուսնին լրումը նոյն ամսոյն 21էն՝ այսինքն գարնանային գիշերահաւասարէն՝ առաջ գալու ըլլայ, այն ժամանակը հարդէ կ'ըլլայ ասլրիլի լուսնոյն լրմանը զիմել. ընդ հակառակն եթէ մարտի 21ին հանգիսկի և կամ անկից վերջը, այն ատենը հետեւեալ կիրակի օրը Զատիկի է: իսկ երբ մարտի լուսնին լրումը կիրակի օրուան լինայ, այն ժամանակ Զատիկը միւս կիրակի օրուան կը ձգուի: Օրինակով մը բացատրենք մինչուկ հիմաց զրուցածնիս:

Դիցուք թէ 1880 տարւոյն Զատիկը գրտնալ կ'ուղենքնք. ուստի նախ պէտք է զիտնալ թէ արդեօք այն տարին նահանջ է թէ ոչ, և կիրակագիրն Բնչ է: Արդ

$$1880+9=1889:28=67\frac{13}{28},$$

որ է ըսել թէ 1880 տարւան մէջ արեգակնային շրջանը 67 անգամ լրացեր է և այժմ 68երորդ շրջանին 13երորդ տարւոյն մէջն ենք. սոյն այս տարին ինչպէս Արեգակնային շրջանին աղիւսակին մէջ կը տեսնանք՝ նահանջ տարի մըն է. իսկ կիրակագիրն է ԴԳ, և հետեւերար տարեգլխուր ըստ նոր տօմարի հինգշաբթի օրով կը սկսի: Ոսկեգիրը գտնալու համար գնենք

<sup>0</sup>

$$1880+1=1881:19=\frac{0}{19},$$

այսինքն թէ Արտօննեան լուսնոյ 99երորդ

շրջանին 0 կամ 19երորդ տարւոյն մէջ կը գտնուինք. իսկ վերադիրը գտնալու համար հարկ է ոսկեգիրէն թիւ մը պակսեցնել և մնացորդը 11ով բազմապատկել. յետոյ հանել ամբողջն որչափ որ 50 իւր մէջը ամփոփուած կայ. այսպէս 19—4=18×11 =198—50=168—50=138—50=108—50 =78—50=48—50=18. ուստի սցն տարւոն վերադիրն է 18 կամ ժԷ. այս վերադիրը կը ցուցընէ թէ յունուարին կի՞ն զեկտեմբեր ամսոյն լուսինը 17 օրը ամբողջացուցած 48երորդը սկսած է. արդ այսլուսնին վերջը գտնալու համար՝ գնենք այսպէս. 29—17=12 յունուար, վերջ զեկտեմբերի լուսնոյն. և գարձեալ՝  
 12+30=42—31 (յունուար ամիսը) =11 փետրուար, վերջ յունուարի լուսնին.  
 11+29=40—29 (նահանջ փետրուարի ամիսը) =11 մարտ, վերջ փետրուարի լուսնին.  
 12 մարտ՝ ծնունդ զատկական լուսնին +15=23 մարտ, աւագ լրտումն լուսնի:  
 Սակայն դիսնալու է որ մարտ 23 ինչ օր է սցն տարին, որովհետեւ սոյն թուականին առջեկի կիրակին Զատիկ սիստոր տօնուի. եթէ Մշտնջենաւոր Տօմարը բանալու ըլլանք՝ ամենադիւրին եղանակաւ կրնանք այս բանիս աեղեկանալ. բայց կը նանք նաև առանց անոր մեր նպատակին հասնիլ հետեւեալ կերպով. գիտնալով որ տարեգլուխը հինգչարթի օր մըն է, եօթ-

նական օր աւելցնենք յունուարի 4ին վրայ և միշտ հինգչարթի օրուան կը հանդիպինք. ասանկով մարտ 25 ինչ օր ըլլալը դիւրութեամբ կը հասկնանք: Ուստի Յունուար 4+7=8 Եւ. +7=15 Եւ. +7=22 Եւ. +7=29 Եւ. +7=36—51 =5 Եւ. Փետրուար 5+7=12 Եւ. +7=19 Եւ. +7=26 Եւ. +7=33—29=4 Եւ. Մարտ 4+7=11 Եւ. +7=18 Եւ. +7=25 Եւ. որ է ըսել թէ: Մարտ 25 է Աւագ Հինգչարթի. ասոր առջեկ կիրակին Մարտ 28<sup>o</sup> Զատիկի է ըստ նոր տոմարին: Մինչեւ ցայժմ՝ ըսաճներնէս կրնանք զիւրաւ գուշակել թէ Երբ կրնայ տօնուիլ ամենէն կանուխ Զատիկը, և Երբ գարձեալ ամենէն հեռաւորը: Յայտնի է որ ընաւ Զատիկական տօնը չկրնար գալ գարնանաշին զիշերահաւասարին օրը՝ այսինքն մարտի 21ին, և ոչ առաւել ևս այս թուականէն առաջ. այս նիւթիս նկատմամբ Նիկիոյ ժողովայն որոշումն ամենուն ծանօթ է. ուստի եթէ մարտի 21ին սոյն ամսոյն լուսինը լրտակու ըլլայ և թէ միանգամայն շաբաթ օր մը ըլլայ այն օրը, այն ժամանակ հետեւեալ օրը՝ որ է մարտ 22<sup>o</sup> ամենէն մօտակայ Զատիկը կը տօնուի. այս երկու էական թէութիւնները աեղիունեցան 1818 տարւոյն Զատիկին համար: Իսկ ամենէն

Հեռաւոր Զատկի տօնը այս կերպով կ'ուրոշուի. այն մերձաւորագոյն մարտի լուսնին լրումը որուն կարելի չէ հետեւիլ մարտի 20ինն է. ուստի հարկ կ'ըլլայ նաև ապրիլի լուսնին լրմանը դիմել. ինչպէս  
 20 մարտ + 15 = 35 — 31 (մարտ ամիսը)  
 = 4 ապրիլ, վերջ մարտի լուսնին.

5 ապրիլ ծնունդ զատկական լուսնին  
 + 13 = 18 աւագ լրումն ապրիլի լուսնոցն.

Բայց թէ որ այն 18երորդ օրը կիրակի մըն է, այն ատեն յաջորդ կիրակուան կը ձգուի տօնախմբութիւնը. որով կ'ըլլայ ապրիլ 18+7=25 և Զատկի ըստ նոր տօնարի:

Արդ 1886ին ամենէն հեռու եկող Զատիկը պիտօր կատարենք՝ այսինքն ապրիլ 25ին; Մէկ խօսքով՝ Զատկական տօնը 35 զանազան թուականաց ամսոյ կրնայ հանդիպիլ:

### ԳԼՈՒԽ Բ

ՆՈՐՈԳՈՒՄՆ ՑՈՒՎՈՍԵԱՆ ՑՈՄԱՐԻՆ

Գրիգոր ծԳ. Մրազան Քահանայացեալք Յուշիսեան տոմարը կ'ուղղէ հրավարտակավ մը յամին 1582. եոր տոմարին ընդունուիլը այլ և այլ քրիստոնեայ ազգաց մէջ. իդա հեղինակին:

Յուլիս Կեսարին տոմարը վոփիսման կամ նորոգութեան մը հարկաւորութիւն ունէր. որովհետեւ դարեր անցնելով քաղաքային և արեգակնային ամաց մէջ մեծ տարրերութիւն մը սարգած մնած էր: Ինչպէս յայտնի է՝ արեւոն տարեկան շըրջանը կը կատարուի 565 օրուան, 5 ժամուան, 48 վայրկենի և 50 մանրերկրորդի մէջ որ է ըսել 6 ժամէն գրեթէ 42 վայրկեան պակաս: Արդ Յուլիսուեան տոմարը կ'ենթադրէ որ՝ ճիշդ 365 օրուան և 6 ժամուան մէջ՝ արեւը իւր շրջանը կ'ընէ, որուն համար նաև չորս տարին մէջմը նահանջ է (ժամ՝ 6×4 տարի՝ =24 ժամ կամ 1 օր):

Հետեւաբար այն 14 վայրկենին և 40 մանր-  
երկրորդին զանցառութեամբը՝ 130 տար-  
ւան մէջ զարնանային զիշերահաւասարը  
օր մը ետք կը մնար, և բնականաբար քա-  
ղաքային տարին ալ արեգակնայինէն օր մը  
առաջ գտցած կ'ըլլար: Այանկով փոքր առ  
փոքր Նիկոյ Ռ. Սիւնէոդոսէն մինչեւ Գրի-  
գոր Ժ. Քահանանային օրը՝ յամին  
1572՝ գարնանային զիշերահաւասարը 10  
օր յետամնաց եղած էր, և Զատիկին ալ իւր  
տաենէն գուրս կը տօնուէր:

Այսակիսի անպատեհութեան գարման  
տանելու համար՝ Սրբազնն Պատր 'ի Հը-  
ռովմէ կանչեց իւր ժամանակուան ամենէն  
երեկի գիտունները, յորս էին լուղովի-  
կոս Լիմի բժիշկը՝ Ալիքէ կարգինալը՝ Քրիս-  
տափոր կլավիսո Յիսուսնեան կարգին կրօ-  
նաւորը և Նաքօն Գոմինիկեան կրօնաւորը:  
Արոնք տասը տարի ամէն բան տեղն 'ի  
տեղը քննելէն և Քահանայապետին ալ ծա-  
նուցանելէն եաբը՝ Գրիգոր Ժ. առանձին  
հրովարտակ մը Հանելով՝ ի 24 փետրուարի  
1582 տարւոյն վճռեց որ 10 օր մէկէն սի-  
տոր ննջուէր Յուլիոսին տոմարէն, այս-  
ինքն 1582 տարւոյն հօկտեմբերի 4ին հինգ-  
շաբթի օրուան յաջորդ օրը փոխանակ նը-  
սուելու՝ հօկտեմբեր 15 ուրբաթ սիտոր ը-  
սուէր: Այսակիսի հարկաւոր և էական նո-  
րոգութեամբ մը վերջապէս բաղձակի հա-  
մաձայնութիւն մը մտաւ արեւուն և եր-  
կրիս մէջ: գարնանային զիշերահաւասարն

ալ ճիշդ մարտի 21ին գալ սկսաւ: Բայց  
այսակիսի ուղղութիւն մը ապագային մէջ  
նաև ազգու ըլլալու համար՝ հարկ էր որ  
այս սխալանքը վերստին տեղի չունենար:  
Ասոր ալ ճարը նայեցաւ Գրիգոր Ժ. ինչ-  
պէս վերը ըսինք՝ ըստ Յուլիոսին տոմա-  
րին 150 տարուան մէջ օր մը, կամ 400 տար-  
ւան մէջ 5 օր՝ 2 ժամ՝ և 30 վայրկեան քա-  
ղաքային տարին արեգակնայինէն առաջ  
կը վազէր. ուստի նոյն Քահանայապետը  
որոշեց որ՝ ամէն գարազլուխ նահանջ  
ըլլալու տեղը՝ չորս գարազլսին մէկը  
միայն նահանջ ափտոր ըլլայ. այսպէս 1600  
տարին նահանջ եղաւ, բայց ոչ 1700, 1800  
և 1900 տարիները. նմանապէս նահանջ  
ափտոր սեպտեմբեմբ 2000 տարին և հասարակ  
2100, 2200 և 2300 տարիները, մինչդեռ  
ընդհակառակն Յուլիոսին տոմարը գտ-  
սոնք ամենքն ալ նահանջ կը բռնէ և ասոր  
համար է որ այսօր երկու տոմարներուն  
մէջ 12 օր տարբերութիւն կայ:

Ուստի թէպէտ և տոմարէն գլխաւոր  
վրիպանները վերցուեցաւ, սակայն փոքրիկ  
սխալ մը մնաց գարձեալ որ է 1 օրուան  
զանազանութիւն 4000 (բռն 3927) տար-  
ւան մէջ. բայց ստիկայ բանի տեղ չըրուիր:  
Գրիգոր Քահանայապետին տոմարն նոր  
կոչուեցաւ, իսկ Յուլիոսինը հին:

Գրիգորեան ընտիր նորոգութիւնը ընդ-  
ունուեցաւ 'ի Քաղղիա յամին 1582, և գոր-  
ծադրուեցաւ 'ի 10-20 գեկտեմբերի. ուրիշ

կաթողիկէ երկիրներուն մէջ ճանչցուեցաւ  
յամին 1584: Գերմանիոյ նորազանդք հա-  
ւանեցան ասոր 1700ին, անգղիացի բողո-  
քականք 1752ին, իսկ Շուետացիք 1755ին.  
և այժմ չին և նոր աշխարհ կը լնդունի զայն:  
Մի միայն Որուար և Յոյնք չընդունեցան  
այս Գրիգորիան Նոր տումարը, լաւագոյն  
համարելով արեւուն հետ անհամաձայն  
երթալքան թէ Հռովմայ Քահանայապե-  
տին հետ համամիտ երենալ:

Հայր գծբաղդաբար մեծագոյն մասամիր  
կաթողիկէ միութենէ բաժանեալ ըլլալով՝  
մինչև ցայցմ այս աստեղաբաշխական սը-  
խալման մէջ կը գտնուին: Բայց պարտք  
կը սեղենք ուրախ սրտիւ նկատելու որ՝  
Հռովմէական Հայոց հասարակութեան մէջ  
արդէն Գրիգորիան Տոմարը մասամիր իւիր  
ընդունուած է Կիլիկիոյ կաթողիկոսական  
վիճակին մէջ, ինչպէս յԱղեքսանդրիա Ե-  
ղիպտոսի ՚ի Դամասկոս ՚ի Վերիտոն (Պէ-  
րութ) ՚ի վանս Լիբանանու ՚ի Հալէպ ՚ի  
Պիրէճէր ՚ի թեմին Մերտիմու ՚ի Տիրգա-  
նակերտ յԱտանա և ՚ի Մարաշ ուստի կը  
յուսանք որ օր մը առաջ բոլոր մեր կա-  
թողիկէ Հայերը այս ուղիղ տոմարին հե-  
տեղով ցուցընեն համօրէն աշխարհի թէ  
ինչպէս որ ՚ի կրօնական մասին մեծին Պե-  
տրոսի Առաքելապետին Աթոռոյն հետ սեր-  
տիւ միացեալ են, նոյնպէս նաև ՚ի բարե-  
կարգականին ճշմարիտյառաջապիմութեան  
շաւով չեն ուղեր չեղիլ բնաւ:

## ՅԱԻԵԼՈՒԱԾ Ա

ՅՈՒԹՈՎ ԱՆՇԱՐԺ ԵՒ ՇԱՐԺԱԿԱՆ ՑՈՒԽԵ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԸՍՏ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՏՈՄԱՐԱՑ<sup>1</sup>

— 0 —

### ԱՆՇԱՐԺ ՏՕՆՔ

Յունուար 1.  
Տօն Տնօրինութեան Քրիս-  
տոսի:

Ի 6 Նորին ամսոյ,  
Յայտնութիւն և Ակտու-  
թիւն Տեառն մերց Յե-  
սուսի Քրիստոսի:

Փետրուար 2.  
Տեառնընդառաջ:

Մարտ 19 ըստ լուսնաց.  
Տօն Արքոյն Յովսեփայ Աս-  
տուածաչօր:

Յունիս 24,  
Յնոնդ Յովհաննու կարա-  
պետին:

<sup>1</sup> Այս տօնին առջևն որ ըստ լուսնաց կամ ըստ մեռ-  
չենք դրան ըսել կուզենք որ լատին և հայկաթողիկէ  
Եկեղեցն մի և նոյն օրը կը կատարէ այն տօնախմբու-  
թիւը:

### ՇԱՐԺԱԿԱՆ ՏՕՆՔ

Զատկէն 9 կիրակի առաջ.  
Եօթանասներորդ կիրակի  
ըստ լուսնաց, և Առաջա-  
ռորաց Բարեկենդան ըստ  
Հ-Ն:

Զատկէն 6 կիրակի առաջ.  
Բնաւ Բարեկենդան, և ա.  
կիրակի պահոց բառաս-  
նորդաց. ասոր առջևի չո-  
րեցարթիւն է

Օր միրոց ըստ լուսնաց:

Զատկէն նախընթաց կիրա-  
կին է Մաղկապարդ, որուն  
առջևի շաբաթը կը կո-  
չուի Աւագ Շաբաթ:

ԶԱՏԿԻ  
Որուն հետագայ կիրակին է  
Նոր կիրակի:

ԱՆՇԱՐԺ ՏՕՆՔ

ի 29 Նորին ամսոյ ըստ  
լուրինաց,  
Գլխաւոր Առաքելոցն Պե-  
տրոսի և Պօղոսի:

Յուլիս 2 ըստ լուրինաց.  
Այցելութիւն Սուրբ Առ-  
տուածածնի:

Օգոստոս 6 ըստ լուրինաց.  
Վարդապատ կամ Պայծա-  
ռակերպութիւն Քրիստոսի:

ի 45 Նորին ամսոյ ըստ  
լուրինաց,  
Վերափոխման Ս. Աստուա-  
ծածնի:

Սեպտեմբեր 8.  
Ծննդանդ Ա. Աստուածածնի:  
ի 44 Նորին ամսոյ ըստ լուրի-  
նաց, Խաչվեց:

Հոյեմբեր 1 ըստ լուրինաց,  
Տօն ամենայն սրբոց:

ի 21 Նորին ամսոյ,  
Ծննդայումն Ս. Աստուա-  
ծածնի ի Տաճարի:

Գեկունմբեր 8 ըստ լուրինաց  
և 9 ըստ Քու.

Անարաս Յղութիւն Ս. Առ-

տուածածնի:

ի 25 Նորին ամսոյ,  
Ծննդանդ Տեառն մերոյ Յի-  
սուսի Քրիստոսի

ԵԱՐԺԱԿԱՑՆ ՏՕՆՔ

Զատկէն Երկու շաբաթ ետ-  
քը: Աշխարհամատարան  
կամ կանաչ կիրակի:

Զատկէն 5 շաբաթ ետքը:

Կարմիր կիրակի:

Զատկէն 4 շաբաթ ետքը,  
Տօն Երեման խաչին ըստ  
Քու:

Զատկէն 40 Երորդ օրը.

Համբարձումն:

Զատկէն 6 շաբաթ ետքը.

Երկրորդ ծաղկապարդ ըստ  
Քու:

Զատկէն եօթը շաբաթ

ետքը.

Հատկէն կամ Պետու-

կոսուէ:

Հոգեգալւստ համապատեան

կիրակին. Տօն ամենա-

սուրբ Երրորդութեան, ո-

րուն առջեկ Հիմողաբթի

օրն է ըստ լուրինաց Տօն

իսրայէրոյ ամենասուրբ

Հաղորդութեան:

Հոգեգալւստն ետքը եկող-

բ. կիրակին ըստ Քու. Տօն

Եկեղեցւոյ կարգեալ ի

Մբրց Խոսաւորչէն մերժ

յելն ի վիրապին:

Հոգեգալւստն ետքը եկող-

բ. կիրակին ըստ Քու Բա-

րեկենդան Խոսաւորչին,

որուն առջեկ շաբաթ օրն

նաև ըստ Քու Պիւտ Կոշ-

խարաց Մբրց Հօրն մերոյ

Պիւտորի Խոսաւորչին:

ԵԱՐԺԱԿԱՑՆ ՏՕՆՔ

Հոգեգալւստն ետքը եկող-

է. կիրակին ըստ Քու

Վարդապատ:

Օգոստոսի 12 Են մինչև 48

փաղառութեամբ հանդի-

պած կիրակին է ըստ Քու

Վերափոխման Սրբոյ Առ-

տուածածնի:

Սեպտեմբերի 11 Են մինչև 47

փաղառութեամբ հանդի-

պած կիրակին է ըստ Քու

Խաչվեց:

Խաչվեց կիրակու շաբաթ

ետքը Վարդապատ Խաչ

ըստ Քու:

Վարդապատ Խաչէն եօթը շա-

բաթ ետքը Գիւտ Խաչ

ըստ Քու:

Յեւոյ նաև,

Յիմակաց Բարեկենդան և

Յիմակ ըստ Քու:

## ՅԱՆԿԱ ՆԻՒԹՈՅ

|   |    |
|---|----|
| Յառաջաբան . . . . .   | 5  |
| Նախադիմելիք . . . . .   | 7  |
| Գլ. Ա. Զատկական տօնին որոշումը . . . . .  | 9  |
| Յօդուած Ա. Նիկիյ Սիւնհոդովին որոշումը . . . . .   | 12 |
| Յօդուած Բ. Նիկիյ ժողովցն ըուսնական շրջանին նկատմամբ ըլրած որոշումը . . . . .                          | 14 |
| Յօդուած Գ. Կիրակի օրերը դանալու և որոշելու կերպ . . . . .   | 19 |
| Յօդուած Դ. Զատիկը գանալու եղանակ . . . . .  | 25 |
| Գլ. Բ. Նորոգումն Յուլիոսիան տոմարին . . . . .   | 31 |
| Յաւելուած Ա. Յուցակ անշարժ և շարժական տօնից Եկեղեցւոյ ըստ հին և նոր տոմարաց . . . . .                 | 35 |
| Յաւելուած Բ. Հրէից Արբազան տարւոյն ամիսները ըստ աստուածաշունչ գլուց . . . . .                         | 41 |
| Յաւելուած Գ. Մշտիճենաւոր տոմար . . . . .  | 43 |
| Յաւելուած Դ. Նախնի Հռովմայեցւոց գործածած տոմարը զոր իրեն սեպհականած է Հռովմական Ա. Եկեղեցին . . . . . | 57 |

# ՅԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՐԵՒՑ ՍՐԲԱԶԱՆ ՏՈՐԻՈՅՆ ԱՄԻՍՆԵՐԸ

ԸՆՏԱԿԱՆ ԱՍՏՈՒՐԱԿԱՆ ԳՐՈՅ

| Ամիս | 1. Նիսան ,     | որ ունի 50 օր և կը համապատասխանէ՝ ըստ նոր տոմարի մարտ | ամսոյն .  |
|------|----------------|---|-----------|
| »    | 2. Եար ,       | » 29 օր   | ապրիլ     |
| »    | 3. Ավգոստ ,    | » 50 օր   | մայիս     |
| »    | 4. Թամբուզ ,   | » 29 օր   | յունիս    |
| »    | 5. Աւտ ,       | » 50 օր   | յուլիս    |
| »    | 6. Ընուլ ,     | » 29 օր   | օգոստոս   |
| »    | 7. Ծիսրի ,     | » 50 օր   | սեպտեմբեր |
| »    | 8. Վերինչվան , | » 29 օր   | հոկտեմբեր |
| »    | 9. Խասել ,     | » 50 օր   | նոյեմբեր  |
| »    | 10. Թեղեկթ ,   | » 29 օր   | դեկտեմբեր |
| »    | 11. Աւագաթ ,   | » 50 օր   | յունուար  |
| »    | 12. Աթար ,     | » 29 օր   | փետրուար  |

Որով տարին ընդ ամենը 554 ունի :

Խնչպէս կ'երևնայ աղիւսակէս Հրէից որբազան տարին լուսնական ամսոց վրայ չափուած ըլ-  
լարով՝ արեգակնայինէն 11 օր կարճ է . ուստի երբեմն երբեմն հարկ էր իրենց համար ի վախճան  
ամին երեսուսաներորդ ամիս մ'աւլ աւելցնել՝ որն որ 29 օր կ'ունենար . ասոր վերբար անոնք  
դրած են երբայեցիք :

Burke Library

Հասարակ տարի, որ կը համապատասխանեմ շատ տամարդիւ 18000 հազար ամսագիր է 1899 սովորականիւ 27 դասման կ ոչ 15 և 26 դարսութ ամսաց :

Դատ նոր տամարդիւ կիրակացիցին է Ա. և տարեգրաւելը կիրարին .

Իսկ շատ հինգյա կիրակացիցին է գ. և տարեգրաւելն ուրբար :







ՄԵԾՆ ԶԵԿԱԿԱՆ ՏՈՄԱՐ

Guttmann und H., 1899, 21 Januar 1899, 18000 U. d'Uhr.

ՄԵՍՆՁԵՆԱՀՈՐՏ

1893, up to 14.4 km<sup>2</sup>, 2000 ha of land.

Digitized by srujanika@gmail.com

Հայոց ազգական պատմութեան առաջնահարուսակ է առաջին աշխարհաց պատմութեանը:

|    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |    |
|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|
| 1  | 2  | 3  | 4  | 5  | 6  | 7  | 8  | 9  | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | 51 |
| 05 | 06 | 07 | 08 | 09 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | 51 |    |    |    |    |
| 05 | 06 | 07 | 08 | 09 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | 51 |    |    |    |    |
| 05 | 06 | 07 | 08 | 09 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | 51 |    |    |    |    |
| 05 | 06 | 07 | 08 | 09 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | 51 |    |    |    |    |



ՄԵՏԱՖԻՆԱՆՍ

Եղանակը պահպանության մեջ է համարվում առաջնահարց գործություն:

卷之三

Իսկ զան առաջին է կիրակագիրն է ԱՅ, և սպազմուն շաբար.

卷之三

ՄԵԾԱԳԵՆՈՒԹԵՒՆ

1899, und die im gleichen Jahr 1800 die „Vereinigte  
Kunstausstellung“ in Berlin.

Պատ հայ տան ամեց կիսականգիւռ է զ, և ապրանքան արքան.

LITERATURE AND LINGUISTICS IN THE 19TH CENTURY



ՄԵՏԱԳՐԱԿԱՆ

1899 *Urticaria* *Urticaria* *Urticaria* *Urticaria* *Urticaria*

**Речь** **как** **средство** **внедрения** **внешней** **политики**

ՄԵԾՆՁՔՆ ԱԿՈՐ ՏՈՒՐԱՅ



ՄԵՇԻ ԶԵՐԸ

Բայ նոր ամանորից կիրականիկ է դա, և սպանութեան վիճակարի:



ՄԵՏԱՖԻՆԱՆՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱռավարության կողմէ հայտադիմություն

A899 *Impatiens longiflora* (L.) Benth.

Առաջին գույքը կազմվել է 1920 թվականի հունվարի 2-ին՝ Առաջին Հանրապետության առաջատար աշխատավորության մասնակի կողմէն:

"I like it very well."



ՄԵՏԱԳՐԱԿԱՆ

ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇԱ ԱՐՄԵՆԻԱ 1800 Խ Ա Հ Ա Յ Ա Հ

1899 मुख्यमन्त्री द्वारा लिखित अपेक्षानि ग्रन्थः

Հայոց առաջարկից կիրակագիրն էլլի, և ապագայուն ընդունաբերութեան մասին առաջարկից կիրակագիրն էլլի:

卷之三



ՄԵՏԱՖԻՆԱՆՍ

1899年1月22日午後四時半頃の事。



ՄԵՏԱԼՈՒՐԱԿ

18000ルートマップ

ԱՅՍԻ արեգակնայիլ շրջանին Աղօստդի ամիսին:

• 110 •

ՄԵՏԱՖԻՆԱՆՍ

1897 արգավիճակը շնչառութեան 10 ամ շաբաթի վեցականի ժամը կազմութէ կազմութէ կազմութէ



ՄԵՏԱԳՐԻ ՍԿՐԱՄ

Պատճենահանության կազմակերպության համար առաջարկություն

112 *Journal of Health Politics, Policy and Law*

## ՅԱԻԵԼՈՒԹ Դ

Այսի ՀՈՒՎՄԱՅԵՑԻՑ ԳՈՐԾԱԽԱՌ ՏՈՄԱՐԸ ԶՈՐ ԻՐԵՆ ՍԵՊԱԿԱՆԱԽ է ՀՈՒՎՄԵԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՆ

(N. 57)

2001

0022513

2013

5374



NL0022513

